

ԽԱՁ-ՓՈՒԾ

ՊԱՏԿԵՐ ՊԱՐՄԻԿ ԽԵՂՃՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԷՆ



(քարգրանուած արեւելեան հայերէնի)

Պ .

Անձիւն , դառնալունչ ձմեռին յաջորդեց ա- նանձերու գարունը , յետոյ երայտ ամառը - ձը- մեռը՝ չոր ցուրտը ցանքերը տնչւացուց , իսկ ամառը՝ չոր սոթը , ժողովուրդը ասրաւ- փով կը նկատէր երաջտութիւնը , մանաւանդ երբ կը անանէր որ քիչսական միջերգները օր ըստօրէ կը սուղնային :

Սովը անխուսափելի կը դառնար : Ծուկային մէջ քանի մը օրէ ք վեր մարզ չէր երևնար :

Մարդիկ դժուար ձեռքերնին ման կուգային եւ հաց չէին գտներ : Կտաւարու թիւնը ամէն խտտութիւն ի գործ կը գնէր արգէտի տատու- թիւնը վերականդնէ . օր չէր անցներ որ մէկ քանի հացթուխներ ականջներէն գամուած չըլլային իրենց խմբութիւնրուն առջեւ սիւնե- րու վրայ (1) : Օր չէր անցներ որ մէկ քանի ալիւր ծախողներու քթէն , ցալմուխի ուղտի նման թոկ անցուցած չըլլային եւ չպտրտցնէին փողոցներէն՝ ի ցոյց աչրց (2) :

Արդէն մարդիկ սկսած էին բանջարներով եւ արմատներով կերակրուիլ եւ մէկ քանի օր ա- ռաջ , փողոցներուն մէջ ցտած էին սովա- մաններու դիակներս :

Բայց Ծահին իւրաքանչիւր Զարցումներուն թէ ի՞նչ դրութեան մէջ է սովը , մեծ վեղիբը սովորաբար կը պատասխանէր . «Բոհութիւն Աստուծոյ , այժմ կատարեալ լիութիւն կը տե- րէ ... փոքր ինչ սղութիւն տեղի ունեցաւ , ան ալ անցաւ » :

(1) Հացթուխներու սովորական պատիժն է այդ երբ անոնք ո եւ է անկարգութիւն մը կ'ընեն : Անոնց անանջ եւ գամեն փայտէ սիւնի մը , եւ այնպէս կանգնած քանի մը օր կը պահեն իրենց խմբութիւն առջեւ , որպէսզի զգան թէ ինչ քան է անօթութիւնը :

(2) Այսպէս կը պատժեն նաեւ մանր գողերը . քթէն բարակ թոկ մը կ'անցընեն եւ ցանկը թոկի ծայրէն բռնած բոլոր չուկան եւ վաղոց- ները կը պտրտցնէ զայն :

Կը զրուցուէր թէ կենսական միջերգները այնքան պակաս չեն որ սովը այն աստիճան սաստկութեան հասնէր : Կը զրուցուէր նաեւ թէ հարուստ հաճիներու մօտ նախորդ տարի- ներէն մնացած այնքան ցորեն ու ալիւր կայ որ բաւական էին ժողովուրդը գոհացնելու , բայց հաճիները կը ծածկէին՝ որպէս զի աւելի սուղ գնով ծախէին : Արդէն հաճի Թայմի ամ- բարները այդպիսի խօսակցութեանց առար- կայ էին դարձած :

Հաստակութեան արտունջը օրէ օր աւելի կը սաստկանար . կարծիք կար որ մանաւանդ պաշտօնատարներն իրենք իսկ կը հովանա-ւորէին հաճիներն իրենց ամբարները թաքը- նելու , եւ փոխանակ անոնց հրամայելու որ հրապարակ հանեն պահուած միջերգը եւ ծա- խին , կը պատժէին խեղճ հացթուխները որոնք հաց պատրաստելու համար պէտք էր որ հա- ճիներէն ալիւր քնէին , իսկ հաճիները կը մեր- ժէին անոնց :

Պաշտօնատարներու մէջէն այդ մեղադրանքը ամենէն աւելի կ'յինար ագարուղայոյն վրայ , որուն հակողութեանը ներքեւ կը զրտ- նուէր բարձրին եւ շուկային բարեկար- գութիւնը :

Օր մը , իրիկուան էգանէն քաւական ետքը , աղօթատէր միւսալիւմաններն իրենց նամակն ըրած վերջացուցած էին եւ կը պատրաստուէին քնանայրու . քորոր փողոցները դատարկուած էին , եւ քաղաքին մէջ գիշերային խաւարին հետ կը քիւրէր խորին լռութիւն : Այդ այն ծանր գերեզմանական լռութիւնն էր որ յա- տուկ է բոլոր պարսկական քաղաքներուն արեւու մտաքէն յետոյ :

Կենքը եւ գործունէութիւնը կը դադրի : Ամէն մարդ կը փակուի իր տանը մէջ , որովհե- տեւ փողոց ելլողը կարող է ձեռքակալուիլ հանդիպող զարագօշներէն եթէ գիշերուան Նշանաբառը չիգրետիւ իսկ գիշերուան նշանա- բառը գրետեն միայն օտարկանութեան մօտիկ եղող մարդիկ :

Յանկարծ գիշերային այդ լռութեան մէջ , տեղէ մը լսելի եղաւ շեփորի ձայն մը , անոր ձայնակցեցան ուրիշ շեփորներ զանազան տեղերէ , այդ չարագուշակ ձայնները արասի

ձգեցին ամբողջ քաղաքին վրայ . ձայները կը
 լսուէին քաղաքին բոլոր բազմիքներուն կը-
 տուրներէն , իոկ անոնց դիշորային տարա-
 ժամ հնչման նշանուածութիւնը տողովորդի գի-
 ատէր(1) : — Խաղ-փուշները ոտքի ելած . . . Այդ
 շշուուշը արագութեամբ սկսաւ տարածուիլ ա-
 մէն կողմ :

Մոխրններու մէջէն զուրս խուժեց մերկ-
 անդամ թշուառութիւնը : Բազմիքներու «ըը-
 ժօթ»ին մէջ մրտած , սեւցած խառնածա-
 դանը , ինչպէս ստկալի բողոք մը , հետզհետէ
 հաւաքուելով եւ ստուարանալով , յառաջ կ'ըն-
 թանաք սեւ , այլանդակ հոսանքով մը : Անոնց
 մէջ կային կիսամերկ կանայք , Թուրքիայի զէմ-
 քով եւ խառնաչփոթ մաղերով , որոնք զինուած
 էին քարերով : Անոնց մէջ կային ծերունիներ
 որոնք , ինչպէս ծերացած , հատուցած կատա-
 ղու թիւն , իրենց մուրացկանութեան ցուպը
 այս գիշեր վրէժխնդրութեան գաւազան էին
 դարձուցած : Անոնց մէջ կային երիտասարդ-
 ներ , բորբոքուած . երիտասարդական կրակով
 ու բողոքով . անոնց մէջ կային պատանիներ ու
 երախաներ , որոնք իբրեւ աղքատութեան ու
 զանուածեան խեղճուկ զաւակներ , կ'աղաղա-
 կէին «Հա՛ց կ'ուզենք» . . . Այդ աղաղակը , ա-
 հեղ , աւելի աղղու էր քան բոլոր զէնքերուն
 շաշիւնը : Բոլորին կ'անաջնորդէր մեր նա-
 խածանօթ ծերունի Ալմէտը , զինուած իր նը-
 շանաւոր հողաթափներով ու ծանր վերարկու-
 ով : Այս գիշեր կարծես թէ երիտասարդացած
 էր : Թանաղ վերարկուն ձախ թիւնի վրայ ձգած
 էր , որ իրն իբրեւ վաճառ կը ծառայէր , իսկ
 աջ ձեռքը բռնած ունէր , ինչպէս երկու ուռմը ,
 իր երկու ծանր հողաթափները : Անոր քովէն
 կ'երթար երիտասարդ ձաֆարը , որ մէկ ձեռ-

քով կը կրէր խաղ-փուշներու դրօշը , իսկ միւս
 ձեռքով՝ իր փոքր մանուկը : Գրօշին վրայ կը
 ծածանէր խաղ-փուշներու նշանը , որ կը պտտ-
 կերացնէր նիհար , կիսամերկ մուրացկան մը ,
 կոացած մէջքով , որ մասով երկինքը ցոյց
 կուտար եւ կարծես զ'ընէր՝ «Այնտեղ դատա-
 ւոր կայո՞ւ :

Բարձր ձողերու գլուխը վառած ջահերու
 կապտագոյն բոցերը կը լուսաւորէին կասաղի
 խուժանը , որ անընդհատ հերպով կը դոտար ,
 կ'որոտար , եւ ընդհանուր աղաղակներու մէջէ
 կ'որոտուէին երեք բառեր յիսյն . «Եա՛ շո՛ւ . . .
 Հա՛ ք» . . .

Բազմութիւնը երթալով կը սաստկանար .
 անոնց հետ կը խառնուէին նոր մարդիկ քա-
 ղաքի սրիկաներէն . որոնցմէ շատերը զինուած
 էին : Բան մը չուհեղանով , այդ սաստկանքը
 կորսնցնելու բնաւ վախ չուհեղին : Իրենց կը
 մնար իրենց մերկ անձը միայն , որմէ վաղուց
 կը ցանկային աղատել : Մէկ քանի տեղ ոտու-
 կանութիւնը իրենց դիմացը ելաւ , բայց վա-
 նեցին քարերով եւ փայտերով : Մէկ քանի
 «ըրբաւուր լիանաններու (1) պահակները
 փորձեցին փակել անոնց ճանապարհը , բայց
 պահականոցը մէկ բողոքով մէջ քարուքանդ ե-
 դաւ անոնց կատաղութեան առջեւ :

— Եա՛ շո՛ւ . . . Հա՛ ք» . . .

Լսելի կ'ըլլային խառնածայն աղաղակներ
 եւ շրջակայքը կը դղրդուէր հազարաւոր ձայ-
 ներէ :

Պառազ քնէած քաղաքացիներ իրենց սեն-
 եակներուն մէջ լսելով այդ աղաղակները , կը
 կարծէին թէ հոգեւոր թափօր մըն էր որ
 կ'անցնէր փողոցներէն : Որովհետեւ քիչ չէր
 պատահէր որ սովի , ժանտախտի եւ ուրիշ պա-

(1) Պարսկական բոլոր քաղաքներու մէջ ,
 ամէն օր առաւօտեան արեւուն ծագումէն շատ
 առաջ , բազմիքներու կտուրներէն չեփրներ կը
 հնչեցնեն . առի նշան է թէ բազմիքը արդէն
 պատրաստ է լուսացուողներու համար : Լուսաց-
 ման արարողութիւնը պէտք է կատարուի առ-
 տուն կանուխ , որպէս զի արեւը , դուրս գալէ
 յետոյ , գանձը մաքուր տեսնէ , բայց ամենու-
 ին սովորութիւնն չէ գիշերները չեփօր հնչե-
 ցնելու , երբ այդ բանը պատահէ , արդէն ս եւ չ
 դժբաղդութիւն մը կը նախագուշակուի , ինչ-

պէս եւ քրիստոնէից եկեղեցիներու զանգակին
 տարածած ձայնը :

(1) Ատի տերովիւններու սովորական բացառ-
 գանուածութիւնն է որ կը նշանակէ՝ «Ո՛վ Տէր , ո՛վ
 Արդարութիւնը , կամ ո՛վ Տէր , ո՛վ Իրաւունք» .

(2) Պարսկաստանի քաղաքներուն մէջ գի-
 շերապահ զինուորները փողոցները չեն պտտար
 այլ կանգնած կը մնան առանձին պահականոց-
 ներու մէջ որ շինուած են ամէն մէկ փողոցի
 ձայրը կամ զլլաւոր անցքերուն մօտ :

տանաբներու ժամանակ ամբողջ ամբողջ գիշերներ փողոցները կը լեցնէր մինչև լոյս կը թափառէր եւ կուժօք ծծեկելով, աղաղակելով երկնքէն գթութիւն կը խնդրէր Բայց այդ թափօքը կը ցանկար որ երկնքի վրէժխնդրութեան գործիքն ինքն ըլլար :

Անցաւ պաղարին հրապարակէն լայն փողոց մը մտաւ եւ իր քայլերն ուղղեց դէպ ի նշանաւոր տուն մը : Այդ միջոցին աղաղակներն աւելի սաստկացան : Զայրացած խուժանը իր ճամբուն վրայ կը փչրէր, կը խորտակէր հաճիներու եւ ուրիշ մեծամեծներու զոններու բուրդարարանքները : (1)

Նշանաւոր տանը առջեւ հասնելով, բազմութիւնը զայն շրջապատեց : Սկսան մուրճով, կացիններով, տապարներով խորտակել զըռները : Յետոյ բազմութեան մէկ մասը ներս թափեցաւ : Ետա չանցաւ, սալայտակներուն վրայէն քաշկրտելով զուրս հանեցին դեակ մը եւ դրան առջեւ ձգեցին . անոր մօտը կայնեցաւ ծերունի Ամէտը, եւ կարգաց հետեւեալ դատաստանական վճիռը. « ահա մեր թշուառութեան եւ աղքատութեան սկզբնական պատճառը, Նթէ այս ամենահարուստ հաճին

այնքան ազա՛ չըլլար, մինք անօթի չէինք մնար . ան խլեց մեր հացը եւ իրեն համար ապարանքներ շինեց : Գանդեցէք այդ ապարանքը որ անիրաւութեան եւ անգթութեան արդիւնքով է կառուցուած : Քանդեցէք, եւ իր սեփական տան աղիւններովը, որ մեր արիւնովն ու արցունքովն է շաղուուած, քարկոծեցէք այս մարդը » . . .

Ջաներուն կապուտակ լուսաւորութեանը ներքեւ, ծերունիին մտայն զէմքը աւելի սուկալի կը դառնար : Ինքն առաջինը եղաւ որ իր ձեռքի հողաթափներէն մին զատապարտեալին գլխուն զարկաւ . Անոր օրինակին հետեւեցան կիները, որոնք ծոցերին լեցուած քարերը ապրիտտին վրայ նետեցին : Յետոյ հազարաւոր ձեռքեր սկսան քանդել աղիւնները եւ սէկ քանի բոպէի մէջ անոր դիակին վրայ ահագին բլուր մը կազմուեցաւ իր փառաւոր ապարանքին փլատակներէն :

Այդ մարդը հաճի Թանին էր, քաղաքին ամենէն անգութ հարստահարին ու վաշխատուն :

Կողոպտելով հաճիին հարուստ ամբարները, բազմութիւնը յաղթական աղաղակներով սկսաւ դէպ ի ուրիշ տուն մը դիմել :

Ատի քաղաքի սրբազայնին տունն էր, որ ցորենատէրերէն կաշառք ընդունելով, սովին սաստկանալուն կը նպաստէր :

Անոր գիական ալ իր տանը փլատակներուն տակ թաղուեցաւ :

ՐԱՅՅԻ

(1) Պարսիկները մասնաւոր հոգ կը տանին իրենց տան գլխաւոր գրան զարգարանքներուն . որքան մեծ ու բարձր է զուրը, այնքան բարձր է եւ տան տիրոջ զիրքը : Դուրը կը ներկայացնէ տիրոջն իշխանութիւնն ու փառքը : Արքունիքի ամենաբարձր զունն սկսեալ մինչև յետին պաշտօնատարին ամենախոնարհ զուրը, բոլորն ալ իրենց մասնաւոր խորհուրդն ունին : Այդ պատճառով է որ զուր բառն իր մէջ կը պարունակէ իշխանութեան իմաստը իր ընդարձակ նշանակութեամբ . « բարձրագոյն զուր » ըսելով կը հասկնանք պետական կազմակերպութեան ամենաբարձր ներկայացուցիչը :